երևին. 'ի հասարակի յոլովագոյն են ծաղկունք քան զանծաղիկս, և արմատք դեղոց քան զհասարակ բոյսս, և պայծառութեամբ երանգոց գերազանցեն բարձրաձաղիկքն Հայոց քան զբազում աշխարհաց: Միջնալեռնեայ բոյսք ձգին ընդ 10-12000', և բարձրալեռնեայքն՝ յ'12-13,000', որ 'ի Մասիս լեթ անձն, որպէս բազմածաղիկն Քարհերձ-մշկունի (saxifraga muxoides), կապուտակն Աստղիկ ալպեան (aster alpinus), Ծիրանեկապոյտն Աստղագեղ (aster pulchellus), Զանգակծաղիկ քարհերձ, Սագիեռուր? (potentilla), և այլն: — Յազգս ազգս ծաղկանց որք զարդարեն զհովիս Հայաստանեայց՝ նշանաւորք են ոբակաւ և գեղով վարդենիք, կակաչք, Մարեմայ-ծաղիկն բարձրացողուն, շուշանն կապուտակ, և բոսորագոյն Թաւիշանման Աղբրաց-արիւն՝ զոր գեղագոյն ամենայն ծաղկանց վկայեն տեսողք եւրոպացիք, և գտանի 'ի կողմանս Կարնոյ, Մշոյ և Լօռւոյ: Յազգս պտղոց ընտիրքն են 'ի Հայս խաղող 'ի հարաւակողմանս, ծիրան 'ի բազում կողմանս՝ որ 'ի Հայոց մուծաւ յԵրուսաղէմ, վասն այնորիկ և ցարդ յանուն աշխարհիս մերոյ առ Նոսա կոչի (armeniaca), շլորք, խնձոր, տանձ, դեղձ, նուռն և Թութ, յորմէ և շերամ որդն և մետաքս յարևելեան Հայս, սեխ և ձմերուկ. անուանի են պտղատու վիճակք Թորթումայ, Արտահանայ, Կաղզուանայ, Երզնկայ, Ամդայ, Սասնոյ, Բալուայ, Վանայ, և այլն. դիեին Սասնոյ, Մշու, Արզնու, Երզնկայ, և այլն: Ջերասեր բոյսք լինին 'ի կողմանս Գանձակայ (Ուտի), յԱղձնիս, 'ի Մոկս ուր լինի և ձիթենի, եղջերենի և Թզենի. իսկ բամբակ, կնջեթ, ծխախոտ, կտաւատ, գլխոր, 'ի բազում կողմանս. որիշ յարևելեան աշխարհի: Ի ցորենաբեր վիճակս որք բազում են, անուանի է 'ի չորից հազարաց ամաց հետէ Շիրակայ դաշտն բարձր, և վիճակք Կարնոյ, Պինկիէոլայ և Խլաթայ. ընտիր է և հաճար Հայոց, որպէս 'ի հասարակի և ամենայն ընդեղէնք և արմտիք 'ի Հայս. ընդ նոսին և խնկունի բոյսք, վասն որոյ քերդողք Լատինաց Խնկաւորս և Անուշահոտս կոչեցին զՀայս. նոյնպէս և արմատք բուժիչք և ներկոց: Ի կարի նշանաւորաց են Լոչաքն որ և Մարգատակ և այլ պէսպէս անուամբ կոչի. խաչդեղն Հայոց, և մեղրահամն Գաղդէ կամ մանանայն՝ որ յամարային եղանակի ինքանէ կամ պատի զատերևոք մատուտակի և մատնեդազ փշոյ և կաղնոյ՝ 'ի կողմանս Տարօնոյ, Դ Հայոց և Աղձնեաց: Ընդ սոսին և այլ բոյս սիզոյ՝ յորում լինի ցանկալի Որդն կարմիր, յԱյրարատ նահանգի, յորմէ հանեն զգեղեցկագոյնն կարմրոց: Իսկ մարմանդքյուռթիք և պարարիչք սփռեալ են յամենայն բարձունս Հայոց, յորս զկէս տարւոյն Թափառին բիւրաւորք Քրդաց և Թիւրքմենից անթիւ հօտիւք խաշանց, և ոմանք ձմերանի չուեն գնան 'ի լայնատարած դաշտն Մուղանայ, որ յայնմ եղանակի ուռճացեալ գալարանայ, և ասպնջական լինի մարդկան և կենդանեաց ջերակարօտից, իսկ ամարանի երաշտանայ և օձուտ լինի՝ ըստ ոմանց:

28. Ի ԿԵՆԴԱՆԻՍ բազմասեռ Ճանաչին 'ի Հայս հոյլք հաւուց, մանաւանդ Ճախնայինքն ջրասէրք և մացառաղօղք, և զնկարագիրս նախնեացն մերոց որ 'ի Ե դարու՝ զկողմանց Կարնոյ և զԱյրարատայ՝ հաստատեն արգեացս քննութիւնք. յորոց Անգղնացիք բնակեալք 'ի Կարնոյ քաղաքի՝ առաւել քան զ'170 ազգս հաւուց նշանակեցին 'ի սահմանս նորին, և զդաշտ նորուն երամովք հաւուց ծածկիլ ասեն զեզերքք շամբին 'ի բարեշունչ եղանակին. նշանաւորքք են 'ի հաւսն Արօսք, որ են կարապք մեծամեծք, և փոքր կարապք, Ճայք, ձկնկուլք, սագք և բագք վայրիք, լոր և աքլոր, կաքաւ, փասիան, աղաւնիք մեծամեծք, տատրակք, և արագիլն և կռունկ սիրելի հիւրք Հայոց, և Ճնճղուկք բազում. որոց բազմաց անուանք ոչ յիշին, և բազում անուանց անուանակիրքն անծանօթք. զի ցարդ չէ ուրուք խնամով քննեալ զկենդանական արարածս Հայաստանեայց: — Բազմաթիւ են և երեք վայրիք, և անուանի յաւուրց Հայկազանց որս նոցին, որ և զսահմանակից աշխարհաց իշխանս ձգէր այսր. բազում ազգք թռչին լինել եղանց և այծեմանց, վիթից և առվնց, յորոց և երկայնեղջիւր առն կամ վիթ մի, այլ և կինճք 'ի շամբս, և բոբոլոնք յեղտիւրս, և գոմէշք ընտանեցեալք, իսկ անասուն ընտանի շատ. 'ի Հայկական նահանգին Ռուսաց համարին իբրև 600,000 ընտանի անասունք, յորս 160,000 եղջերաւորք. իսկ յօսմանեան մասնէ ամի ամի ոչխարք ընտիրքք աւելի քան զմիլիոն առաքին 'ի Տաճկաստան: Ի դրաստուց ազգի պատուականագոյն են երիվարք և ձիք նժոյգք Գարապաղոս և Քրդաստանի, զոր փոխան դանձուց հարկէին երբեմն վարիչք աշխարհիս՝ դրանն Պարսից՝ 'ի տիրապետելն սոցա. դարմանին և ուղտք յԵրեւանեան նահանգի և յարևելեայսն: Ի գազանաց վայրենեաց գտանին վագր և ինձ և բորեան և լուսանունք, արջ, գայլ, աղուէս, շնագայլ, շունք մեծամեծք, ցիռք, և այլն, իսկ առիւծ հազիւ երբեք ուրեք տեսանի: Ի մանուանց վայրենեաց՝ ոզնի և կուզ, և ջրշուն և կուղբ: — Յազգս զեռնոց նշանաւորքք են նախ ձկունքն առաջք 'ի գետս, յորս յաճախագոյն գտանի կարմրախէտն, և 'ի լիճս՝ յորս տառեխ միայն 'ի Վանայն, իսկ 'ի Սեւան իբրև 15 ազգք ձկանց ճանաչին, յորս 12 կոչին հայեցի անուամբք և այլազգեաք, որպէս Կողակ, Բաղդակ, Աղնիճան, Իշխանաձուկն, Գեղաքուսի, Կռակաուց, Պէօճէկ, Ամառն, Բեխլու, Կարմրախէտ, Ջալաձուկն, Ձուար. 'ի հզօր գետս լինին և մեծամեծ ձկունք, որպէս յԱրածանի, ուր հինքն ընդդայս լինել ասացին, և ստուգեցաւ 'ի մեռոյ լինել 'ի նմա ձուկն վիթխարի կիտահասակ. բայց առաւել յաճախութեամբ գտանին պատուականագոյնք 'ի ձկանց 'ի բերանս Կուրայ և Երասխայ, յորոց և զանուանի աղկիթն (խաւեար) գործեն, և մեծ աղբիւր է շահու: — Բազմաթիւք են և միջատաց սեռք 'ի Հայաստան, յորոց ոչ սակաւ նորայայտ տեսակս հաւաքեալ ընասիրաց ոմանց Գերմանացւոց՝ բերին յԵրուսաղէմ: Ցիշելի է ընդ սոսին և մեղու, որ 'ի կողմանս խաղտեաց և այլ ուրեք ուրեք ընծայէ առատ և ընտիր մեղր: Ի միասակար զեռունս նշանաւոր են կարիճք մեծամեծ 'ի կողմանս Աղձնեաց և 'ի դերբուկս աւերակ քաղաքանաց, և մուն և մժեղ 'ի կողմանս Երևանայ և Քրդաց, յորոց տագնապեալ բնակչացն յամարանի խուսեն 'ի բարձունս լերանց: